# ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Այս տարվա օգոստոսին Քյոլնի DOMFORUM կաթոլիկ հասպատությունում կազմակերպվեց դասախոսությունների և հանդիպումների շարք՝ նվիրված քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

Օգոստոսի 14-ին տեղի ունեցավ առաջին միջոցառումը, որի ընթացքում «Հայոց Ցեղասպանություն. ճանաչում նաև Գերմանիայում» թեմայով բանախոսեց Թրիյերի համալսարանի իրավաբանության բաժնի ուսանող Իլյաս Ուայթը:

Օգոստոսի 21-ին կազմակերպված երկրորդ միջոցառմանը Հայոց Եկեղեցու պատմությանը, արվեստին և այսօրվան նվիրված դասախոսությամբ հանդես եկավ Հարավային Գերմանիայի հայ համայնքների հոգևոր հովիվ Տ. Արմաշ աբդ. Նալբանդյանը՝ խոսքը զուգակցելով լուսապատկերների և լուսանկարների ցուցադրությամբ:

Այս նույն հասպատությունում օգոստոսի 23-ին ցուցադրվեց Անրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմը: Թեև նախատեսված էր կինոնկարի միայն առաջին մասի ցուցադրումը, սակայն հանդիսատեսների բուռն ցանկությամբ ներկայացվեց նաև երկրորդ մասը, որով չորս ժամ շարունակ ներկաները մեծ հուզումով դիտեցին այս ֆիլմը:

Վերջին՝ չորրորդ միջոցառումը, որը նվիրված էր հայ ժողովրդի պատմությանը, տեղի ունեցավ օգոստոսի 29-ին: Օրվա բանախոսն էր Ռաֆֆի Քանդյանը:

**Օգոստոսի 24-ին** Շտուտգարդի Շվեպիշ Կմունդ ավանում տեղի ունեցավ միասնական էկումենիկ աղոթք, որին մասնակցեցին. Ավետարանական Եկեղեցուց՝ Հանս Ֆոն Քելեր եպիսկոպոսը, Կարլ Հայնց Շայդե քահանան և Գաբրիելե Կրոհմերը, Կաթոլիկ Եկեղեցուց՝ Մայքլ քահանան և Հեթցել սարկավագը: Հայոց Եկեղեցուց այս արարողությանը մասնակցեց Տ. Արմաշ աբեղա Նալբանդյանը:

Այն կազմակերպվել էր ի գնահատություն Կարմիր Խաչի այս ավանի մասնաճյուղի, որն արդեն տասը տարի է, ինչ օգնություն է ցուցաբերում Հայաստանում դեկտեմբերյան երկրաշարժից տուժածներին: Նաև յոթ տարի է, ինչ Երևանում հիմնված բարեգործական ճաշարանից ձմռան ամիսներին օգտվում են 700-800 մեծահասակներ, 350 երեխաներ և 30 հաշմանդամներ: Տեղի լեռնագնացների փրկարարական ջոկատը, որը մասնակցել էր 1988-ի փրկարարական աշխատանքներին, սերտ կապի մեջ է «Սպիտակ» նույնանունյա ջոկատի հետ: Շվեպիշ Կմունդի Ավետարանական Եկեղեցու քահանա Կարլ-Հայնց Շայդեի նախաձեռնությամբ լեռնագնացների ջոկատը Գերմանիայում պատրաստել է 4,5 մետր բարձրությամբ մետաղյա մի խաչ, որն անցյալ տարի բարձրացվել է քառագագաթ Արագածի գագաթներից մեկին: Ջոկատի անդամները նաև 16.000 գերմանական մարկ են ուղարկել Հայաստան՝ արյան քաղցկեղով հիվանդ երկու պատանիների բուժման համար:

Էկումենիկ այս արարողությանը «Սպիտակ» փրկարարական ջոկատի կողմից ներկա էր Ժենյա Պատուրյանը, որը գերմանացի լեռնագնացներին ընկերակցել էր Արագածի գագաթը ելնելիս և խաչը տեղադրելիս, որի համար, ի նշան շնորհակա-

լության, գերմանական ջոկատի անդամները նրան նվիրեցին մի խաչ, որը հայերեն «Պահպանիչ»-ով օրհնեց Արմաշ աբեղան և այն հայ փրկարարուհու պարանոցից կախեց Ավետարանական Եկեղեցու քահանա Շայդեն:

Էկումենիկ այս արարողությունից հետո ներկաները հյուրընկալվեցին լեռնագնացների ջոկատի քաղաքից դուրս գտնվող լեռնային մի տնակում:

**Օգոստոսի 25-ին** Բրավնշվայգի հայ համայնքի նախաձեռնությամբ քաղաքի համալսարանում, 1700-ամյակի առիթով, Հայոց Եկեղեցու պատմությանը, արվեստին և ներկային նվիրված բանախոսությամբ հանդես եկավ Տ. Արմաշ աբեղա Նալբանդյանը: 1700-ամյակին նվիրված համանման զեկուցում Արմաշ աբեղան կարդաց նաև Նեքարսուլմի բարեգործական ընկերության սրահում հայ-գերմանական մշակութային միության հրավերով:

**Մեպտեմբերի 5-ին** Քյոլնի Ս. Տերինիդատս եկեղեցում, քրիստոնյա-հրեա համագործակցության կազմակերպության նախաձեռնությամբ, ճանաչված լրագրող Ռալֆ Ջորդանոն Հայկական Ցեղասպանությանը նվիրված դասախոսություն կարդաց: Նույն այս թեմայով նա 15 տարի առաջ մի ֆիլմ էր նկարահանել, որը մեծ արձագանք էր գտել Եվրոպայում: Հայերով և գերմանացիներով լեցուն եկեղեցում, ուր ներկա էր նաև հայոց թեմական առաջնորդը, բանախոսին ողջունեց Քյոլն քաղաքի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու պատվելի Հանս Գեորգ-Լինկը, որը նաև Քյոլնում 1700-ամյակին նվիրված հանդիսությունների կազմակերպիչներից է:

Գերմանահայոց թեմում 1700-ամյակի գլխավոր ձեռնարկը տեղի ունեցավ սեպտեմբերի 9-ին Քյոլնի կաթողիկե նշանավոր Մայր Տաճարում: Այն կազմակերպվել էր առաջնորդարանի և Գերմանիայի Հյուսիս-Հռենոսյան Վեսթֆալն նահանգի միջեկեղեցական կազմակերպության կողմից: Արարողության սկզբում մեծաշուք թափորով Քյոլնի Մայր Տաճար առաջնորդվեցին Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեգջյանը և Քյոլնի Արքեպիսկոպոս կարդինալ Մայզները, ինչպես նաև Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, ապա տեղի ունեցավ հայածես ժամերգություն:

Հազարավոր հայերով և օտարազգիներով լեցուն եկեղեցում 1700-ամյակի խորհրդի, Հայոց Եկեղեցու և էկումենիզմի ոգով գործելու անհրաժեշտության մասին իրենց քարոզներում խոսեցին Գարեգին Սրբազանը և կարդինալ Մայզները: Արարողությունից հետո եկեղեցու հանդիսասրահում գեղարվեստական ճոխ հայտագրով հանդիսավոր ընդունելություն տեղի ունեցավ:

**Հոկտեմբերի 13-ին** Բեռլինի հայ համայնքում Տ. Մերովբե վրդ. Իսախանյանի մատուցած Ս. Պատարագից հետո կազմակերպվեց հանդիսություն՝ նվիրված Թարգմանչաց տոնին, որտեղ ելույթ ունեցավ Գերմանիայում իր պաշտոնավարությունը ավարտող Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Ոսկանյանը:

Նույն այս առիթով դեսպանի՝ հոկտեմբերի 16-ին կազմակերպած հրաժեշտի ընդունելությանը մասնակցեց Բեռլինի հայոց հոգևոր հովիվ Տ. Սերովբե վրդ. Խսախանյանը՝ տեղի հայ համայնքի վարչության անդամների հետ, իսկ հոկտեմբերի 30-ին Գերմանիայի Արտգործնախարարության կողմից կազմակերպված հրաժեշտի ճաշկերույթին մասնակցեց առաջնորդ Սրբազանը՝ դեսպանին հանձնելով մի հուշանվեր և հաջողություն մաղթելով իր հետագա աշխատանքում:

**Հոկտեմբերի 16-ին** Տ. Գարեգին արքեպս. Բեգչյանը թեմական խորհրդի առաջնորդ Սարգիս Քեհյայանի հետ ներկա գտնվեց Արմին Թ. Վեգներին նվիրված ցուցահանդեսի բացմանը, ուր, ի թիվս այլ ելույթ ունեցողների, խոսք ասաց նաև առաջնորդ Սրբազանը՝ հայ ժողովրդի երախտագիտությունը հայտնելով այն բանի համար, որ գերմանացի ազնիվ սպան, տեսնելով հայության դեմ գործադրվող ոճիրը, չերկնչեց բողոքի և դատապարտության իր ձայնը բարձրացնել:

**Հոկտեմբերի 21-ին** Քյոլնի Ս. Սահակ-Մեսրոպ առաջնորդանիստ եկեղեցում տեղի ունեցավ երաժիշտ և խմբավար Վարուժան Մարգարյանի համերգը՝ նվագակցությամբ դաշնակահար Կարեն Թոփկյանի: Վ. Մարգարյանն առաջնորդարանի կողմից հրավիրվել է որպես խմբավար և երաժիշտ գերմանահայ համայնքների:

Համերգի ընթացքում, որը կազմակերպվել էր առաջնորդարանի մշակութային հանձնաժողովի կողմից, հնչեցին Կոմիտաս վարդապետի ստեղծագործությունները և նրանց դաշնամուրային մշակումները:

**Հոկտեմբերի 27-ին** Բաղեն Վայտեմբերգի հայ համայնքը մատաղօրհնությամբ տոնախմբեց Գերմանիայի հայոց առաջնորդության հիմնադրման տասնամյակը:

Ձեռամբ Գարեգին Սրբազանի մատուցված Ս. Պատարագին ներկա էին տեղի Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները: Ս. Պատարագից հետո Ջալախի հայ տանը տեղի ունեցած հանդիսության ժամանակ առաջնորդ Սրբազանը «Օրհնության գրեր» հանձնեց տեղի հայ համայնքի կյանքին իրենց կարևոր նպաստը բերած մի խումբ ազգայինների:

**Նոյեմբերի 3-4-ը** Ֆրանկֆուրտում ևս հանդիսավորապես նշվեց Գերմանիայի հայոց առաջնորդության հիմնադրման տասնամյակը:

**Նոյեմբերի 3-ին** Ջաալպայի սրահում կազմակերպված հանդիսությունը բացվեց թեմական խորհրդի ատենապետ Սարգիս Քեհյայանի խոսքով: Շուրջ 500 ներկաների առջև իրենց գեղարվեստական կատարումներով հանդես եկան երգիչ Հարութ Փամբուկչյանը, Մարսելի «Սահակ-Մեսրոպ» երգչախումբը, որը հաջորդ օրը մասնակցեց նաև Ս. Պատարագին և «Արաքս-Սասուն» պարախումբը: Վերջում Գարեգին Սրբազանը մի խումբ ներկաների հանձնեց օրհնության գրեր, 1700-ամյակի արծաթյա մեդալներ և այլ հուշանվերներ:

Հաջորդ օրը ձեռամբ առաջնորդ Սրբազանի մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում ընթերցվեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի՝ թեմի հիմնադրման 10-ամյակի առիթով տրված Օրհնության գիրը (տե՛ս էջ 48):

**Նոյեմբերի 10-ին** Գերմանիայի հայոց առաջնորդության մշակութային հանձնախմբի նախաձեռնությամբ Քյոլնի համայնքային սրահում դասախոսությամբ հանդես եկավ հանձնախմբի գործուն անդամներից Ժորժիո Բավայիան՝ ցուցադրելով Հայաստանի տեսարժան վայրերի և ճարտարապետական մի շարք հուշարձանների իր նկարած տեսաերիզները: Այս միջոցառման ժամանակ համայնքի «Կոմիտաս» երգչախմբի կատարմամբ հնչեցին հայկական ժողովրդական երգեր:

Նույն օրը Քեհլի Ս. Մարիամ կաթոլիկ եկեղեցում տեղի ունեցավ էկումենիկ արարողություն՝ նվիրված 1700-ամյակին, որի ընթացքում հայ և կաթոլիկ հոգևորականների կողմից համատեղ խաղաղության աղոթքն ուղղվեց եկեղեցում հավաքվածներին: Արարողությունից հետո եկեղեցու սրահում կազմակերպված հանդիսության ժամանակ Հայոց Եկեղեցու 1700-ամյա պատմությանը նվիրված դասախոսությամբ հանդես եկավ Արմաշ աբեղան:

**Նոյեմբերի 11-ին** Շվեյցարիայի գերմանախոս բաժնի հոգևոր հովվության նախաձեռնությամբ Ցյուրիխում, ձեռամբ շրջանի հոգևոր հովիվ Տ. Շնորհք քհն. Չեքիջյանի մատուցվեց Ս. Պատարագ և 1700-ամյակի շրջագծում միջեկեղեցական հանդիպում տեղի ունեցավ, որոնց մասնակցեցին Կաթոլիկ և Ավետարանական բարեկարգչական Եկեղեցու հոգևորականները և ներկայացուցիչները:

Արարողությունից հետո կազմակերպված հանդիսության ժամանակ ելույթ ունեցավ «Կոմիտաս» երգչախումբը, մեներգիչ Արամ Արաբյանը և դաշնակահար Միքայել Պալյանը, Հայոց Եկեղեցուն նվիրված բանախոսությամբ հանդես եկավ Արմաշ աբեղան, իսկ «Մոռանալ թե հիշել» հարցադրմամբ Սարգիս Շահինյանն անդրադարձավ ցեղասպանության ճանաչման խնդրին: Շվեյցարիայի հայ գաղութի պատմությանն իր խոսքը նվիրեց Էդուարդ Կեոքսելը:

**Նոյեմբերի 17-ին** մատուցված Ս. Պատարագով և առանձին հանդիսությամբ Նյուրեմբերգի հայ համայնքը ևս տոնեց 1700-ամյակը:

**Նոյեմբերի 24-ին** Գերմանիայի հայոց առաջնորդությունն ու հայ-գերմանական բարեկամությունը Քյոլնի հայ համայնքի սրահում կազմակերպեցին դասախոսությունների մի շարք նվիրված 1700-ամյակին:

Նույն օրը Բադեն Վայտենբերգում հայկական համայնքի կողմից նշվեց Քյոփինգենի Ս. Խաչ եկեղեցու ձեռք բերելու 18-ամյակը: Ձեռամբ Տ. Գարեգին աբղ. Հարությունյանի, մատուցվեց Ս. Պատարագ: Ի հիշատակ համայնքի վարչության հանգուցյալ անդամների տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն:

*ԸՍՏ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*
*ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ*